ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. 6 ԱՄՍՎԱ ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎԻ

09.08.2013Թ. ժ 11^{00} Նոր Գեղիի Ց.Մ.Խաչատրյանի անվան <<Մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ի դահլիճ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի օգոստոսի 9-ին Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքում տեղի ունեցավ համայնքի 2013 թվականի 6 ամսվա հաշվետու ժողովը:

Ժողովին ներկա էին գտնվում Նոր Գեղի վարչական տարածքում գտնվող հիմնարկ-ձեռնարկությունների տնօրեններ, ավագանու անդամներ և համայնքի բնակիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի ղեկավար պարոն Ֆ.Թևոսյանը և ներկաներին հայտնեց,որ ժողովի նպատակը 6 ամսվա ընթացքում կատարված աշխատանքների մասին հաշվետվություն ներկայացնելն է:

Այնուհետև ներկայացվեց համայնքի ժողովի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1.Համայնքի ղեկավարի 6 ամիսների հաշվետվություն:

Զեկ.- Նոր Գեղի համայնքի ղեկավար Ֆ.Թևոսյան

2.Քառամյա ծրագրի կատարման վերաբերյալ:

3.Հողային օրենսդրության պահանջների կատարման ուղղությամբ կատարած աշխատանքների մասին:

4.Ֆինանսական գործունեության մասին տեղեկատվություն:

5. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված հարցերի տեղեկատվություն:

6. Համայնքում իրականացվող կրթական և առողջապահական ծրագրերի իրականացման մասին:

7.Հարցեր բնակիչների կողմից:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2013թ. տվյալներով Նոր Գեղի համայնքն ունի 1550 տնտեսություն,իսկ համայնքի բնակչության թվաքանակը կազմում է 6129 մարդ:Դպրոցի երեխաների թիվը կազմում է 746 աշակերտ, ուսուցիչների թիվը՝ 95 :

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

. Ընդ. գյուղ.նշանակության հողեր – 1744.84 հա

. այդ թվում վարելահողեր – 699.46 հա

. բազմամյա տնկարկներ – 398.84 հա

. Բնակավայրեր - 318.12 հա

. Արդյունաբերության ընդերքօգտագործ. և այլ արտադրական նշ. օբյեկտների - 243.64 հա

. էներգ., տրանսպորտի կապի կոմունալ ենթակ. օբյեկտներ – 24.1 հա

. Հատուկ պահպանվող տարածքներ – 49.32 հա

. Հատուկ նշանակության տարածքներ – 51.82 հա

. Անտառային - 11.04 հա

. Ջրային – 7.5 հա

Ընդամենը – 2450.38 հա

Նշվեց,որ համայնքում անցկացվող հողամասերի աճուրդ-վաճառքի և վարձակալության ընթացակարգը համապատասխանում է գործող օրենսդրությանը:

Ելնելով քառամյա ծրագրով նախատեսնված աշխատանքներից նշվեց,որ համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. Արցախի և Առողջարանային փողոցներում անցկացվել է ցերեկային լուսավորություն:
2. Մասնակի հատվածներում ասֆալտապատվել են ճանապարհները:
3. Նոր կառուցվող թաղամասերում անցկացվել է ոռոգման ջրագիծ և խմելու ջրագիծ:
4. <<Ց.Մ.Խաչատրյանի անվան Մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ում բացվել է հեքիաթի սրահ և ընթերցասրահ:

Համայնքի ղեկավարը նշեց,որ ընթացքի մեջ են հետևյալ աշխատանքները՝

1. Ց.Մ.Խաչատրյանի անվան <<Մշակույթի կենտորն>> ՀՈԱԿ-ի դահլիճի բեմի վարագույր է անցկացվում:
2. Բանավան կոչվող թաղամասում կառուցվում է նոր դպրոց 250 /երկու հարյուր հիսուն/ աշակերտի համար:
3. Կառուցվում է համայնքի եկեղեցին:

3. Նորոգվում, բարեկարգվում և ասֆալտապատվում են ճանապարհները:

4. Նոր թաղամասերում անցկացվում է խմելու և ոռոգման ջրագծեր:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2013Թ. 6 ամիսների եկամուտների ցուցանիշները

	2013 թվական 1 կիսամյակ		
	պլան	կատարողական	%
Հողի հարկ	5600	5264.1	94.0
Գույքահարկ	9960	9234.4	92.7
Տեղական տուրք	760	1824	240.0
Հողի և գույքի վարձավճար	3822	3913.6	102.4
Հողերի օտարումից մուտքեր	20000	2741.2	13.7
Այլ եկամուտ	5490	4292.0	78.2

ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Այս ծրագրի շրջանակներում համայնքի ղեկավարը կարևորեց հատկապես հետևյալ աշխատանքները.

1.Աղբահանության խնդիրների վերացում.

Գյուղապետարանը Նոր Գեղիի համատիրությանը ամսեկան հատկացնում է 250 000/երկու հարյուր հիսուն հազար/ դրամ՝աղբահանություն կատարելու նպատակով:

1.Համայնքի անապահով ընտանիքներին հուղարկավություն կատարելու համար հատկացվում է օգնություն 40 000/ քառասուն հազար/ դրամ:

2.Համայնքի անապահով ընտանիքներին տրվում է մինչև 50 000 /հիսուն հազար/ դրամի չափով օգնություն:

3.Համայնքի նորածին երեխաներին տրվում է 30000/երեսուն հազար/ դրամ օգնություն:

ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Առողջապահական և կրթական ծրագրերի իրականացման համար բնակչությանը տրվել է ֆինանսական օգնություն 6600.0 դրամի չափով:

1. Նոր Գեղի համայնքի «Առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ին ամսեկան հատկացվում է 150 000/մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ՝ գինեկոլոգի բաժին և բուժքույրեր պահելու համար:

2. «Նաիրի» ոչ պետական միջնակարգ դպրոցին ամսեկան հատկացվում է 400 000 /չորս հարյուր հազար/ դրամ:
3. <<Ց.Մ.Խաչատրյանի անվան Մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ում անցկացվում են անվճար համակարգչային դասընթացներ համայնքի բոլոր բնակչության համար:

2. Հարցեր բնակիչների կողմից

1. Համայնքի բնակիչ Գ.Հարությունյանը հարց բարձրացրեց 2013թ-ի ոչ բարենպատ գարնանային անձրևային եղանակներից Նոր Գեղիի սեփականաշնորհված այգիներում շատ տարածքներում քոս հիվանդությամբ,ինչպես նաև այգիների որոշակի հատվածի ոչ ժամանակին տերևաթափ լինելու խնդրի մասին:

2. Նոր Գեղի համայնքի Ուսանողական փողոցի 14 շենքի բնակիչ Զվարթ Մարգայանը հարց բարձրացրեց սույն շենքի տանիքի վերանորոգման խնդրի մասին,որ տուժել էր սույն թվականի հունիսի 3-ին տեղի ունեցած ուժեղ քամուց:

3. Նոր Գեղիի Ուսանողական փողոցի 8 շենքի բնակիչները հարց բարձրացրեցին իրենց շենքի փլուզված մասը վերանորոգելու համար:

4. Համայնքի բնակիչներից մեծ մասը հարց բարձրացրեցին Նոր Գեղիի <<Նաիրի>> ոչ պետական միջնակարգ դպրոցի փակվելու վերաբերյալ,քանի որ դպրոցն ունի 170 աշակերտ,ինչն անհնարին է թիվ 1 դպրոց տեղափոխվելու համար,և աշակերտների թիվն է ավելանում ամեն դասարանում կլինեն 25-35 աշակերտ՝ 2 հերթով սովորելու համար:
Համայնքի ղեկավարը նշեց,որ գյուղի մեծ մասը ապահովված է 24ժամյա խմելու ջրով և համայնքը ամբողջովին գազաֆիկացված է:
Բնակիչների կողմից եղան տարբեր հարցադրումներ առկա խնդիրների վերաբերյալ և հարցերին տրվեցին բավարար պատասխաններ:

Ամփոփելով կայացած ժողովը համայնքի ղեկավարը նշեց,որ մշտապես գտնվում է բնակչության կողքին և վերահսկում է աշխատակազմի կատարած բոլոր աշխատանքները:

Ժողովի նախագահ՝ Ֆ.Թևոսյան

Քարտուղար՝ Ա.Առաքելյան